Նորա մնասու։ Եւ արքայն կամէր զի (տողը ջնջուած), ... զոր եւ պատճառեալ առ նա՝ եթէ Այդ խորհրդոց կարօտանայ, արա՛ և խ[որհուրդ] ընդ մօլնայս քո եւ ընդ գլխոցն զօրուն եւ ես պատրաստ եմ ընդ քո ... վասն որոյ եւ արարին բազում անգամ խորհուրդ եւ ոչ կարէին հանդարտել զ ... և Եչի ԺԴ որ Օգոստոսի՝ ամենայն հանդիսիւ և զբանն ոչ ոք ... մինչև ի Շաբաթի աւուր մունետիկն աղաղակէր՝ եթէ գարնան յաւուրս պատերազմ ունի թագաւորն, զօրք պատրաստեսցին յիւրաքանչիւր պէտս։

Եւ յՕգոստոսի ԻԸ Եչի[1]) աւուր բերին զգլուխ Հիւսէին փաշայի Դաղացւոյ, որ ի Փէթիհից Սէլիմ սուլթանէ օճաղ նոցա էր Դաղայն, և էր մեծախելք այր եւ անուանի, մինչ զի ի Մսրայ մինչեւ ի Մէքէ առ հասարակ երկիրն Արաբացոց երկնչէին ի նմանէ և էր յոյժ բարեբարոյ եւ քրիստոնէասէր եւ ոչ ոք թագաւոր զնոսա մնասեաց։ Բեօփրուլին չատ ջանաց եւ տղայն զԴպլէլին առաքեաց առ նա թէ էմիրհաճ ես կրկին, և կալեալ մերձ յԵրուսաղէմ (պարապ) և սպան և առաքեաց զգլուխն և զբազում մեծամեծս ընդ նմա սպան, ընդ որում և գլուխք նոցա եկին[2]) առ խսլթանէ, և զտեղին ետուն եղբօր նորա։ Եւ յաւուրս յայսոսիկ հիւանդանայր (վէզիրն) յոյժ յոյժ և տիւան չառնէին, եւ պահոցս Սուրբ Խաչի դարձեալ ելանէր արտաքս, և հրաման հանեն (տողը ջնջուած) սուրսաթ ժողովեալ և որ ինչ պիտոյք զօրացն և արքունի։ Եւ նոր օթաղ կարէին որպէսզի համբաւեսցի ազգս ամենայն ...։

Բչի ԺԲ[3]) Օգոստոսի պահոց ել նաւն Երուսաղէմի։ Եւ մեծաւ պատրաստութեամբ հանին և յետ Զ աւուր

1) յուրբաթի. 2) եկն. 3) Ը.